

նութեան վերջը. «Յորժամ թուականս մեր ՌՁԲ (1633) էր, վախճանեցաւ սուրբ Հայրն մեր տէր Մովսէս կաթողիկոսն. սուգ մեծ եթող մեզ եւ Ազգիս^{2*}»:

Հակառակ այս վկայութիւններու Առաքել Դաւրիժեցի մահը կը նշանակէ 1632ին, իր տողերն են (էջ 312). «Եկաց սա կաթողիկոս յերիս ամս եւ ի կէս եւ ի թուականիս ՌՁԱ ամին, ի Մայիս ամսոյ ժԳ. վախճանեցաւ»: Հոս Դաւրիժեցի տարւով մը կանուխ կը նշանակէ մահը, որ անընդունելի է, քանի որ ուրիշ ժամանակակիցներ միաբան 1633 զիտեն մահուան տարին:

Կաթողիկոսութեան տեւողութիւնը «յերիս ամս եւ ի կէս» զոր կը նշանակէ Դաւրիժեցի, նոյնպէս սխալ է. ուրիշ ժամանակակիցներ զիտեն «ամս չորս եւ ամիսս ըստ ամացն»: Մկրտիչ Լեւոնացի 1653ին կը զրէ. «եղև զրաւ կենաց իւրոց... ի ՌՁԲ թուոյս մերոյ, զոլով վաթսուն ամաց, կացեալ յաթոս Հայրապետութեան արմ չորս եւ ամիսս ըստ ամացն³» (Ձեռ. էջմ. 1742): Մահը 60 տարեկան հասակին զիտէ նաեւ Մովսէս րանասէր. «փոխադրի յանմահական կեանսն վաթսուն ամաց» (ԱՐԲՏ, 1888, էջ 418):

^{2*} էջմ. 1184, թղ. 320ր: Արարատ, 1888, էջ 410:

³ Ընդունելով Մովսիսի մահը 1633 Մայիս 21, ընտրութիւնը կամ օծումը կ'ենթադրէ 1629 Յունուսրին (Յունվ. 13 ըստ Առ. Դաւրիժեցւոյ):